Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

371.1
Ա-23

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ

# ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրատպ տպարան „ՀԵՐՄԷՍ“ Ընկ. Մադար. փող., 15.
1906. (156)

371
9-23
370
2230-ՆԱ
1 MAR 2010
12 JUL 2013
1004
15586

Дозволено Цензурою 20 Апрѣль 1906 г. г. Тифлисъ.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Անցեալ 1905 թ. հոկտեմբեր ամսին Թիֆլիսում գումարուեցաւ ընդհանուր հայ ուսուցչական համաժողով, մասնակցութեամբ տեղային և գաւառական ուսուցիչների թւով մօտ 120, որը որոշեց կազմակերպել «Հայոց դպրոցների ուսուցչական միութիւն», սրա կանոնադրութեան նախագիծը կազմելու համար ընտրեց իւր միջից մի մասնաժողով՝ բաղկացած 7 անդամից և 6 փոխանդամից Մասնաժողովը իւր ունեցած պարբերական նիստերում զբաղուեց այդ գործով և վերջացնելով Ուսուցչա- կան Միութեան կանոնադրութեան նախագիծը հրաւիրեց Թիֆլիսում եղած հայ ուսուցիչներին քննելու վերոյիշեալը: Տեղի ունեցաւ երկու ընդհանուր ժողով՝ բազմաթիւ ուսուցիչների ներկայութեամբ, որտեղ և վերջնականապէս որոշուեց տպագրել տալ կանոնադրութեան նախագիծը: Մասնաժողովս տպագրել տալով սոյն նախագիծը՝ առաջարկում է բոլոր ուսուցիչների քննութեան և խնդրում է իրենց դիտողութիւններով ներկայանալ ուսուցչական համագումարին՝ վերջնականապէս քննելու և հաստատելու այդ կանոնադրութիւնը: Համագումարը հաւանօրէն տեղի կունենայ մայիսի կամ օգոստոսի վերջերին, որի մասին նախօրէն կ'յայտարարուի լրագրութեան միջոցով:

Մասնաժ. նախագահ՝ Արսէն աւ. քահ. Բագրատունի

Անդամներ:
- Արեղեան Արտաշէս
- Արարատեան Յովսէփ
- Ղալայեան Ներսանդ
- Վանցեան Գրիգոր
- Լեոն Ճգնաւորեան

Քարտուղար և անդամ՝ Առաքել Աւագեան.

Թիֆլիս, ապրիլ 1906 թ.

12 JUL 2013

43.248

# Նախագիծ Կանոնադրութեան Հայոց Դպրոցների Ուսուցչական Միութեան։

---

**Ռուսահայոց դպրոցների ուսուցիչներն ու ուսուցչուհիները միանալով կազմում են «Հայոց Դպրոցների Ուսուցչական Միութիւն»։**

## Գլուխ Ա.

## Միութեան նպատակը

§ 1. Միութեան նպատակն է նպաստել հայ ուսուցչինութեան ապահովութեան, մասաւոր զարգացման և հասարակական դիրքի բարձրացման։

§ 2. Այս նպատակին հասնելու համար Միութիւնը դիմում է հետևալ միջոցներին.

ա) Որոշում է դասագնի կամ ռոճիկի մինիմումը։

բ) Կազմում է կենսաթոշակի և փոխատու խնայողական դրամարկղներ առանձին կանոնադրութեամբ։

գ) Բաց է անում իսկական անդամների համար սանատորիա, էժանագին բնակարաններ, ժողովարան, հիւանդանոց։

դ) Հրատարակում է մանկավարժական թերթ։

ե) Բաց է անում մանկավարժական դասընթացներ և փորձնական դասեր։

զ) Հիմնում է մանկավարժական թանգարան, կազմում է ցուցահանդես, գրադարան՝ գրքերի ու խաղալիքների, ինչպէս և դասագրքերի պահեստ։

է) Մատակարարում է հայոց դպրոցներին, փոխադարձ համաձայնութեամբ հոգաբարձուների, ուսուցիչներ և վարժուհիներ։

ը) Քննում է ուսուցիչների և վարժուհիների պաշտօնից հեռացնելու պատճառները. ուսու-

ցիչների միմիանց և հոգաբարձուների հետ ունեցած տարաձայնութիւնները։

## Գլուխ Բ.

## Միութեան իրաւունքները։

§ 3. Միութիւնը իւր գործունէութիւնը կանոնաւորելու և ընդլայնելու համար վայելում է ամեն տեսակ կառավարչական հաստատութիւնների և անձինքների օրինաւոր աջակցութիւնը։

§ 4. Միութիւնը կարող է ունենալ եկեղեցապատկան և դպրոցապատկան անշարժ կալուածների եկամուտներից և գումարներից որոշ տոկոս արդիւնք։

§ 5. Միութիւնը ունի առանձին կնիք և դրոշմ այս վերնագրով «Հայոց դպրոցների Ուսուցչական Միութիւն։

§ 6. Միութիւնը կարևոր դէպքերում իրաւունք ունի լրացնել կամ փոփոխել սոյն կանոնադրութիւնը պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ։

## Գլուխ Գ.

## Միութեան միջոցները։

§ 7. Միութեան միջոցները կազմում են՝

ա) Անդամակցական վճարներ (вступительные взносы)։

բ) Անդամավճարներ (членскіе взносы)։

գ) Տոկոսներ և եկամուտներ Միութեան ունեցած գումարներից և շարժական ու անշարժ կայքերից։

դ) Նուիրաբերութիւններ։

ե) Կողմնակի արդիւնքներ՝ թատերական ներկայացումներից, երեկոյթներից, պարահանդէսներից, բարեգործական վաճառքներից, հրապարակական դասախօսութիւններից, գրական երեկոյթներից։



## Գլուխ Դ.

## Միութեան գումարների բաժանումը։

§ 8. Միութեան գումարները բաժանւում են՝

ա) Անձեռնմխելի

բ) Պահեստի

գ) Ընթացիկ և

դ) Յատուկ գումարների։

§ 9. Անձեռնմխելի գումարը գոյանում է անդամների վճարների և յատուկ նուիրաբերութիւնների $^1/_{10}$ մասից. այս գումարի բերած $^0/_0{}^0/_0$-ը հինգ տարուց յետոյ միայն կարող են գործ ածուել կարիք ունեցող անդամներին նպաստ տալու համար։

§ 10. Պահեստի գումարը գոյանում է՝

ա) Ոչ յատուկ նպատակով արուած նուիրաբերութիւնների $^1/_{10}$ մասից։

բ) Կողմնակի արդիւնքների $^1/_{10}$ մասից։

գ. Զանազան ձեռնարկութիւնների տուած արդիւնքի $^1/_{10}$ մասից։

§ 11. Ընթացիկ գումարը գոյանում է բոլոր եկամուտների մնացած $^9/_{10}$ից։

§ 12. Յատուկ գումարները (спеціальные фонды) գոյանում են՝

ա) Որոշ նպատակով նուիրած գումարների $^9/_{10}$ մասից և նրանց տոկոսներից։

բ) Ընթացիկ գումարի մի որոշ մասից ընդհանուր ժողովի որոշմամբ։

գ) Յատուկ նպատակով տրուած ներկայացումներից, դասախօսութիւններից, երեկոյթներից և այլն։

§ 13. Ընթացիկ ծախսերի համար տրւում է խորհրդին մի որոշ գումար. իսկ մնացած գումարը պահւում է որև է բանկում կամ իրրև կանխիկ գումար, կամ թէ արժէթղթերով։

§ 14. Վարչութիւնների ընթացիկ ծախսերի քանակը որոշում է ընդհանուր ժողովը և առաջարկում է խորհրդին ի հաստատութիւն։

## Գլուխ Ե.

### Միութեան կազմը, անդամների իրաւունքները եւ պարտականութիւնները։

§ 15. Միութեան կազմի մէջ մտնում են՝

ա) Իսկական անդամներ

բ) Նպաստող »

գ) Պատուաւոր »

§ 16. Անդամների թիւը սահմանափակ չէ. իսկական և նպաստող անդամները ընտրւում են վարչութեան կողմից ձայների մեծամասնութեամբ. իսկ պատուաւոր անդամները ընտրւում են խորհրդից։

§ 17. Իսկական անդամը պարտաւոր է վճարել յօգուտ Միութեան դրամարկղի՝ անդամակցական վճար (вступительный взносъ) մէկ ռուբլի. իսկ անդամավճար՝ քաղաքի ուսուցիչները 5 ռուբլի, գիւղինը 3 ռուբլի։

Ծանօթ. Անդամավճարի քանակի վերջնական որոշումը թողնւում է համագումարին։

§ 18. Բան տարի կանոնաւոր և կամ նոյնքան ժամանակի համար միանուագ վճարող անդամը ազատւում է անդամավճարից, պահելով մշտական անդամի լիակատար իրաւունքները։

§ 19. Միութեան աջակցող անձինք համարւում են իբրև նպաստող անդամներ։

§ 20. Միութեանը խոշոր ծառայութիւն ցոյց տւող անձինք ընտրւում են պատուաւոր անդամ։

§ 21. Կամովին կամ խորհրդի վճռով հեռացուած անդամների անդամավճարները չեն վերադարձւում իրենց. երբ այդպիսիները նորից մտնեն Միութեան մէջ նախկին անդամավճարները հաշւում են։

## Գլուխ Զ.

### Միութեան գործադիր մարմինները։

§ 22. Միութեան գործերը վարում են՝

ա) Վարչութիւններ



բ) Ընդհանուր ժողովներ

գ) Վերաստուգիչ յանձնաժողովներ

դ) Խորհուրդ

ե) Համագումար

§ 23. Միութիւնը կազմուած է զանազան տեղերում գտնւող ճիւղերից, որոնք ունին իրենց վարչութիւնները, վերաստուգիչ յանձնաժողովները և տեղական ընդհանուր ժողովները։

§ 24. Միութեան ճիւղերը կազմւում են այն ժամանակ, երբ անդամների թիւը մինիմում 10 է։ Ճիւղերն իրենց գործունէութիւնը կարող են սկսել այն ժամանակ, երբ խորհրդի համաձայնութիւնը առած կլինեն։

§ 25. Ճիւղերը ստանալով խորհրդից իրենց գործունէութիւնը սկսելու համաձայնութիւնը՝ հաղորդում են այդ մասին տեղական իշխանութեանը։

§ 26. Խորհրդի և Վարչութիւնների բոլոր անդամները ամեն տեղ ձրի են կատարում իրանց պարտաւորութիւնները, բացի այն դէպքերից, երբ Միութեան խորհուրդը վարձատրութեան արժանի կը գտնի։

§ 27. Վարչութիւնները իրենց վիճակի բոլոր գործերը վարում են խորհրդի տուած առանձին հրահանգներով։

Ծանօթ. Վիճակի սահմանները որոշում է խորհուրդը։

§ 28. Վարչութիւնները իրենց կարգադրութեան տակ գտնւող գումարների հարկաւոր մասը թողնում են ընթացիկ ծախքերի համար, հաժամայն նախահաշուի որոշման, իսկ մնացորդը առանց յետաձգութեան ուղարկում են Խորհրդին։

§ 29. Վարչութիւնները՝ վարչական կազմակերպութեան, գործավարութեան եղանակի, նախահաշիւ և հաշիւներ կազմելու, հաշուապահութեան, ընդհանուր ժողովներ կայացնելու, պարապմունքների շրջանը և նոցա նիւթերը որոշելու վերաբերմամբ գործում են խորհրդի տուած առանձին հրահանգների ճիշտ հիման վերայ։

## Գլուխ Է.

### Վարչութիւնների զբաղմունքը։

§ 30. Վարչութիւնների զբաղմունքներն են՝

ա) Անդամների (իսկական և նպաստող) ընդունելութիւնը։

բ) Անդամավճարների և այլ եկամուտների գանձումը։

գ) Միութեան գրամների և կայքերի պահպանութիւնը։

դ) Նպաստներ և օժանդակութիւններ տալը համաձայն առանձին մշակուած կանոնների։

ե) Տեղային ընդհանուր ժողովների համար ամեն տեսակ զեկուցումներ կազմելը։

զ) Վարել կանոնաւոր հաշուապահութիւն և իւրաքանչիւր տարուայ գործունէութեան մանրամասն հաշիւը տալ ընդհանուր ժողովին։

է) Իւրաքանչիւր տարուայ նախահաշիւը կազմել և ներկայացնել ընդհանուր ժողովին, ապա խորհրդին ի հաստատութիւն։

ը) Կատարել ընդհանուր ժողովի վճիռները և խորհրդի հրահանգներով եղած առանձին կարգադրութիւնները։

Ծանօթ. Վարչութիւնները պատասխանատու են Խորհրդի առաջ նրա կայքերի և գրամագլխի ապահովութեան համար։

## Գլուխ Ը.

### Միութեան խորհուրդը եւ կազմը։

§ 31. Միութեան խորհուրդը ընտրւում է Համագումարից 3 տարի ժամանակով. խորհրդի տեղը որոշում է համագումարը։

§ 32. Խորհուրդն իրրև Միութեան Կենտրոնական հիմնարկութիւն ղեկավարում է նրա բոլոր գործերը համապատասխան նրա գոյութեան նպատակին։

§ 33. Խորհուրդը կազմում են՝ համագումարից ընտրուած 9 անդամներ և 5 փոխանդամներ։



Ինն անդամները իրենց միջից ընտրում են նախագահ, փոխնախագահ, քարտուղար և գանձապահ։ Նախագահի բացակայութեան դէպքում նրա պաշտօնը վարում է փոխնախագահը։

§ 34. Խորհրդի նիստերը անընդհատ են. իսկ նիստերի օրերը որոշւում են ըստ պահանջման հարկի։

§ 35. Խորհրդի նիստը համարւում է կանոնաւոր, եթէ բացի նախագահից կամ փոխնախագահից մասնակցում են ևս 4 անդամ։ Անդամների որև իցէ մէկի բացակայութեան դէպքում նախագահը հրաւիրում է փոխանդամներին հերթով։

§ 36. Վճիռները կայանում են ձայների առաւելութեամբ. հաւասարութեան դէպքում՝ նախագահի կամ փոխնախագահի ձայնը տալիս է առաւելութիւն։ Այդ վճիռները գործադրւում են նախագահի ստորագրութեամբ և քարտուղարի վաւերացմամբ։

§ 37. Միութեան գործերին վերաբերեալ բոլոր արձանագրութիւնները և պայմանագրերը, նոյնպէս և գումարների պահանջումը փխատու հիմնարկութիւններից և առհասարակ այն տեղերից, որոնց յանձնուած է Միութեան գրամագլխի պահպանութիւնը նմանապէս և Միութեան պատկանեալ գումարների փոխադրութիւնը պէտք է ստորագրեն՝ նախագահը և խորհրդի 2 անդամը քարտուղարի վաւերացմամբ։

## Գլուխ Թ.

### Խորհրդի զբաղմունքները։

§ 38. Խորհուրդը կենտրոնացնում է իւր մէջ ճիւղերի կայքերի, գրամագլուխների և ուրիշ միջոցների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները և կարգադրում է այդ միջոցները իւր նախահաշուի կամ համագումարի վճիռների համաձայն։

§ 39. Վարչութիւնների համար իրրև ձեռնարկ խորհուրդը կազմում է սոյն կանոնադրու-

թեան սահմաններից դուրս չգալով առանձին հրահանգներ, որոնք պէտք է ենթարկուեն Համագումարի վերահայեցողութեան և հաստատութեան։

§ 40. Խորհուրդը ընդունում է վարչութիւններից անդամավճարները, դրամական նուէրները և այլ գումարներ և մտցնելով առանձին մատեանների մէջ տալիս է վարչութիւններին գանձապահի ստորագրութեամբ ընկալագրեր։

§ 41. Խորհուրդը իւր ստացած գումարները տալիս է պետական կամ մասնաւոր բանկեր ցըպահանջ կամ ընթացիկ հաշուով՝ իւր մօտ պահելով մի փոքրիկ գումար։

§ 42. Իւրաքանչիւր տարուայ վերջին խորհուրդը կազմում է ընդհանուր նախահաշիւ Միութեան յաջորդ տարուայ ծախքերի համար և ստանալով վարչութիւններից ճիւղերի նախահաշիւները և քննելով, փոփոխուած կամ անփոփոխ հաստատում է այդպիսիները համապատասխան իւր կազմած ընդհանուր նախահաշուի։

§ 43. Իւրաքանչիւր տարի Վարչութիւններից ստանալով ճիւղերի նախընթաց տարուայ հաշիւները, խորհուրդը կազմում է ընդհանուր հաշիւ Միութեան բոլոր գործերի վերաբերեալ. գումարների մտից և ելից, կայքերի դրութեան մասին և 3 տարուայ այս ընդհանուր հաշիւները առաջարկում է համագումարի քննութեան։

§ 44. Խորհուրդն ունի կնիք իւր յատուկ անունով; իսկ Վարչութիւններին յանձնում է կնիքների ձևեր, մատեանների օրինակներ դրամական վճարները և նիւթական նուէրները գրելու համար։

## Գլուխ Գ.

## Խորհրդի իրաւունքները։

§ 45. Խորհուրդն ունի հետևեալ իրաւունքները՝

ա) Իրեն տուած իշխանութեան սահմաններում կապել ամեն տեսակ պայմաններ և դաշինքներ։



բ) Շարժական և անշարժ կայքերի և գոյքերի գնումն և վաճառումն։

գ) Դատ բանալ ուր հարկն է Միութեան գործերի վերաբերմամբ և պաշտպանել նրա շահերը իւր հաւատարմատարների ձեռքով, տալով նրանց իւր կողմից առանձին հաւատարմագրեր։

դ) Միութեան գործերի վերաբերմամբ խորհուրդը հաղորդակցում է բոլոր կառավարական և հասարակական հիմնարկութիւնների և անձանց հետ։

## Գլուխ Դ.

## Վերաստուգիչ մասնաժողովներ։

§ 46. Ընդհանուր ժողովները ընտրում են 3 հոգի, որոնք և կազմում են վերաստուգիչ մասնաժողովներ, որոնց պարտաւորեցնում են քննել վարչութիւնների բոլոր գործերը երբ կամենան և այդ մասին զեկուցանեն ընդհանուր ժողովին։

Վերաստուգիչ մասնաժողովի անդամները չեն կարող վարչութեան անդամներից լինել.

Կարևոր դէպքում խորհուրդը կարող է իւր միջից ևս ուղարկել քննիչ յանձնաժողով քննելու վարչութեան գործերը։

§ 47. Համագումարն ևս ընտրում է 3 անդամից և 2 փոխանդամից բաղկացած վերաստուգիչ Մասնաժողով քննելու խորհրդի գործերը և զեկուցանելու իրեն։

## Գլուխ Դ.

## Ընդհանուր ժողովներ։

§ 48. Բոլոր ճիւղերը ունենալու են պարտադիր տարեկան մի մի անգամ ընդհանուր ժողովներ՝ հաշուի և նախահաշուի համար։ Ընդհանուր ժողովները կարող են լինել և արտակարգ՝ վարչութեան կամ վերաստուգիչ Մասնաժողովի հրաւէրով և կամ անդամների $^1/_3$ի ցանկութեամբ։

§ 49. Ընդհանուր ժողովը համարւում է կա-

նոնաւոր, եթէ ներկայ են տեղային անդամների $^1/_2$-ից աւել։

§ 50. Անդամների թուի սակաւութեան պատճառով եթէ առաջին ընդհանուր ժողովը չկայանայ, այն ժամանակ նշանակւում է երկրորդ ժողով, որից յետոյ ժողովի վճիռը համարւում է կանոնաւոր և ժողովը կայացած, չնայած ներկայ եղող անդամների քանակութեան։

§ 51. Ընդհանուր ժողովները ունեն իրենց նախագահը և քարտուղարը, որոնք չեն կարող լինել վարչութեան կամ վերաստուգիչ Մասնաժողովի անդամներից և իւրաքանչիւր տարի ընտրւում են ընդհանուր ժողովից։

Գլուխ Ժ.Գ.

## Ընդհանուր ժողովների զբաղմունքները։

§ 52. Ընդհանուր ժողովների զբաղմունքները են՝

ա) Քննել և հաստատել անցկացած տարուայ հաշիւը ու առաջիկայ տարուայ նախահաշիւը ու առաջարկել խորհրդի վերահաստատութեան։

բ) Ընտրել և հեռացնել պաշտօնից վարչութեան անդամներին, փոխանդամներին նոյնպէս և վերաստուգիչ Մասնաժողովի անդամներին։

գ) Քննում է վարչութեան կամ մի որևէ անդամի զեկուցումները, յայտարարութիւնները։

դ) Քննում է և որոշում անդամների և վարչութեան մէջ ծագած տարաձայնութիւնները և բողոքները. վերջնական եզրակացութեան չեկած դէպքում դիմում են խորհրդի վերջնական վճռին։

ե) Որոշում է ծախսելի ընթացիկ դումարի չափը, անշարժ կայքեր գնելու կամ ծախելու հարցը. որի վերջնական որոշումը թողնւում է խորհրդին։

Ծանօթ. Անդամները իրենց զրաւոր զեկուցումները և բողոքները ներկայացնում են վարչութեան նախագահին, ընդհանուր ժողովից 3 օր առաջ, իսկ վերջինս—ընդհանուր ժողովին։

§ 53. Ընդհանուր ժողովը բաց է անում



վարչութեան նախագահը, որից յետոյ ընտրւում է նորը։

Գլուխ Ժ.Դ.

## Համագումար։

§ 54. Համագումարը կայանում է 3 տարին մէկ անգամ այն տեղում, որտեղ յարմար կհամարէ և կ'որոշէ նախորդ համագումարը։

Համագումարը կարող է լինել և արտակարգ՝ խորհրդի, վերաստուգիչ Մասնաժողովի հրաւէրով և կամ Միութեան բոլոր անդամների $^1/_5$ ի ցանկութեամբ խորհրդի միջոցաւ։

§ 55. Համագումարը կայանալուց առաջ խորհուրդը նախօրօք լրագրների և ազանձին տպագրուած հրաւիրաթղթերի միջոցաւ յայտարարում է ի գիտութիւն իւր բոլոր անդամների։

§ 56 Համագումարը կանոնաւոր է, եթէ ներկայ լինեն բոլոր անդամների թուի $^1/_2$-ից աւելի։

Անդամների օրինաւոր թուի պակասութեան պատճառով եթէ չկայանայ առաջին համագումարը, այն ժամանակ նշանակւում է երկրորդը, որը կ'համարուի օրինաւոր՝ չնայած անդամների քանակութեանը։

§ 57. Համագումարի իւրաքանչիւր անդամ պէտք է ընտրէ իւր նախագահը և քարտուղարը, որոնք չեն կարող լինել խորհրդի և վերաստուգիչ Մասնաժողովի անդամներից։

§ 58. Համագումարի ժողովելու ժամանակը (տարուայ որ ամսին) որոշում է ինքը համագումարը։

Գլուխ Ժ.Ե.

## Համագումարի զբաղմունքները։

§ 59. Համագումարի զբաղմունքներ են՝

ա) Քննել և վերջնականապէս հաստատել խորհրդի ներկայացրած 3 տարուայ հաշիւները, որոնք վերաբերում են Միութեան բոլոր ճիւղերին։ Կազմել հետևեալ 3 տարուայ մօտաւոր նախահաշիւը։

բ) Որոշել դասագնի կամ ռոճիկի վճարումը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0216347



47.248

գ) Ընտրել և հեռացնել պաշտօնից խորհրդի անդամներին, փոխանդամներին և վերաստուգիչ մասնաժողովի անդամներին։

դ) Քննել ճիւղերի վարչութիւններից ստացուած զեկուցումները և յայտարարութիւնները։

ե) Քննել խորհրդի և վարչութիւնների մէջ ծագած տարաձայնութիւնները (ոչ անհատների) և իւր վերջնական վճիռը կայացնել։

զ) Ծանօթանալ Միութեան բոլոր գործերի հետ և կազմել իւր անդամների բոլոր ցանկը։

է) Զբաղուել կանոնադրութեան փոփոխմամբ, եթէ այդ անհրաժեշտ է։

ը) Զբաղուել Միութեան փակման խնդրով։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Գլուխ ԺԶ.

## Միութեան խափանումն։

§ 60. Միութեան խափանման համար անհրաժեշտ է համագումարի մէջ բոլոր անդամների 2/3-ի վճիռը։

Ծանօթ. Համագումարը չկայացած դէպքում. Միութեան փակման մասին խորհուրդը թէ՛ լրագրութեան և թէ պաշտօնական առանձին յայտարարութիւնների միջոցաւ յայտնում է բոլոր ճիւղերի վարչութիւններին, որպէս զի նրանք իրենց ընդհանուր ժողովների վճիռներն ուղարկեն խորհրդին յայտնելով Միութեան խափանումն ցանկացողների թիւը։

§ 61. Եթէ մի որևէ պատճառով Միութիւնը դադարեցնէ իւր գոյութիւնը, Միութեան բոլոր մնացած դրամագլուխը, շարժական ու անշարժ կայքերը գործ են դրւում ազգօգուտ գործերի համար և կամ նուիրւում են ազգային հաստատութիւններին՝ իբրև սեփականութիւն, Միութեան բոլոր անդամների 2/3-ի վճռի համաձայն։

Վ Ե Ր Ջ.